

## Սյուժետային հանգուցալուծումները հայրեններում

**Բանալի բառեր և արտահայտություններ.** հայրեն, կառուցվածք, սյուժե, գեղարվեստական պատկեր, սյուժետային անակնկալ հանգուցալուծումներ, հորինվածքային յուրահատկություն:

**Key words and expressions.** hayren, structure, plot, artistic image, unexpected denouements of the plot, inventive peculiarity.

**Ключевые слова и выражения:** айрен, строение, сюжет, художественный образ, неожиданные сюжетные разрешения, вымышленная особенность.

Ուսումնասիրողները բազմիցս անդրադարձել են հայրենների՝ գեղարվեստական պատկեր ստեղծելու սկզբունքներին, գրել թե՛ բովանդակային, թե՛ պատկերավորման-արտահայտչական միջոցների հարստության, գեղեցիկ կատարյալ զգացողության, հայրենների պարզության ու նրանցում արտահայտված զգացմունքների անկեղծության մասին:

Հորինվածքային այս յուրահատկություններն ու ազգային խառնվածքի, հոգեբանության առանձնահատկություններն էլ պայմանավորում են հայրենների գեղագիտական գրավչությունը:

Նույնիսկ հայրենային պատրաստի ձևերը, օրինակ՝ ժողովրդական երգերին հատուկ մոտիվները՝ գործողության ժամանակի հիշատակությունը, իր սիրածին պատահաբար հանդիպելը, իր սիրածին դիմելը և այլն, չեն կաղապարում հայրենները. դրանք, ստեղծվելով պահի ազդեցությամբ, կրում են անհատականության կնիք՝ գեղարվեստական անակնկալ պատկերների շնորհիվ: Այդ ինքնատիպ պատկերները ծնվում են թե՛ հետաքրքիր զուգորդումներով, թե՛ սյուժետային անսպասելի հանգուցալուծումներով:

Հայրենի՝ որպես բանաստեղծական կառույցի ամփոփ, ավարտուն ստեղծագործություն լինելու հանգամանքը պայմանավորում է այդ կառույցում յուրաքանչյուր տողի հստակ դերը:

Հայրենի հեղինակը տեսնում է պահը, վայրկյանը և հենց ընթացքի, շարժման մեջ էլ նկարագրում այն: Ապա կատարվում է պատկերի, հոգեվիճակի համադրություն կամ հակադրություն, և այդ փոխաբերական հենքի, համեմատության, զուգորդության շնորհիվ տողն ստանում է հոգեբանական ենթատեքստ, որը հանգուցալուծվում է հայրենի իմաստը, գաղափարը խտացնող վերջին տողում:

Բանաստեղծական նման կառույցին բնորոշ է դառնում շարժումը: Կա սկիզբ, ընթացք և ավարտ: Շարժման զգացողությանը նպաստում են նաև հայրենների նշանակալից մասի՝ երկխոսության ձևով կառուցված լինելը, հայրենների հնչերանգային հարստությունը՝ հարցում, զարմանք, շեշտ, բացականչություն:

Կառուցվածքի հակիրճությունը բացառում է մանրամասները՝ ընթերցողին հնարավորություն տալով երևակայությամբ նոր գծեր հաղորդելու նկարեն պատկերին՝ յուրաքանչյուրն ըստ իր հոգեկերտվածքի: Անօրինակ սեղմությամբ, տողերի ներքին շաղկապվածությամբ, ուր մի տողը հենք է հանդիսանում մյուսի համար, անակնկալ հանգուցալուծումներով հայրենները ձեռք են բերում «նովելային» բնույթ:

Գիշերս ես ի քուն էի՝

Իմ հալալ տեղացն ի վերա.

Լուսինն էր կամար կապեր՝

Իմ ճոհար անձկանս ի վերա.

Իմ եարն յերագիս եկաւ

Ի սիրուն զէտ հարբած եղա.

Յանկարծ ի քընուս ելա,

Լուսինկա ու խիստ կու ցոլա<sup>1</sup>.

Ա/Կ, 231-238:

Առաջին և երկրորդ տողի նկարագրությունից հետո «բացվում է» երրորդ տողը, որովհետև մուտք է գործում հոգեվիճակը. երագում յարին է տեսնում, որի սիրով արբած է: Իսկ վերջին՝ չորրորդ տողն անակնկալի է բերում ընթերցողին իր անսպասելիությամբ, «նովելային» ավարտով:

Ի ցույց դնելով երագի, ցանկության և իրականության հակադրությունը (դրան նպաստում են լուսին-կամար կապել, լուսինկա-խիստ կու ցոլա զուգահեռները)՝ տողը ընթերցողի համար հարթում է բաց տարածություն՝ թափանցելու հայրենի քնարական հերոսի հոգու խորքերը, նրա հետ զգալու չունեցածի-երագածի կորստի ցավը, նաև սեփական պատրանք-կորուստների ցավը:

Ահա նման «նովելային» ավարտ ունի մի ուրիշ հայրեն.

Իմ եարս այլ ի դուրս ելաւ,

Շորորաց ի պաղչան գնաց.

Զձեռքն այլ ի ծառն ձգեց,

Ծառերու ճղերն երերաց.

<sup>1</sup> «Հայրեններ», Աշխ.՝ Ա.Շ. Մնացականյանի, Երևան, 1995թ., էջ 227: Այսուհետ կնշվի միայն շարքի և տողի համարը:

Էրաց, թե խնժոր քաղեր,

Իր ճերմակ ծոցիկն երեվաց.

Այնչափ քնքուշ չէ՛նք տեսեր,

Երբ տեսայ՝ նա ուշքս գնաց.

Ա/ՅԳ, 56-63:

Չկա խոհ, չկա փիլիսոփայություն, կա սովորական պատում, սյուժե՝ այգի գնացող աղջկա մասին: Բայց առանձնանում է պահը, վայրկյանը՝ խնժոր քաղող աղջկա ճերմակ ծոցիկը բացվելու հետ: Ընդամենը մի բառ՝ քնքուշ, ու նկարագրական պատումին խառնվում է տաք հոսանքը: Տեսա-ուշքս գնաց եզրերը հյուսվածքին բերում են հոգեկան ալեկոծություն: Այդ անակնկալ ծնված հույզն ու անկեղծությունն էլ պայմանավորում են հայրենի բանաստեղծական գեղեցկությունը:

Նկարագրական, սյուժետային կառուցվածք ունեցող հայրենները, որ ենթադրում են իրողության հավաստիություն, կոմպոզիցիոն յուրօրինակ հնարանքի շնորհիվ բացահայտում են ոչ միայն պատմողի, այլև հերոսուհու ապրումները: Պատումը նունուֆար ծաղիկ քաղող աղջկա մասին դեռ փակ պատկեր է. գուցե միայն «մանր քալուփոխ» կապակցությունը կարող է փոքր-ինչ ուղղորդել ընթերցողին, մտածելու տեղիք տալ, թե մտամուր է աղջիկը.

Ձիմ եարն ի գընալ տեսա,

Որ կերթար ի ճամփատ ի վար.

Մանր քալուփոխ կաներ,

Եւ քաղեր ծաղիկ նոնոֆար.

Հայրենի երրորդ տողը ձեռք է բերում իմաստային ծանրություն. առանց երկխոսության, լոկ փաստի արձանագրումով բացահայտվում է հերոսուհու հոգեվիճակը.

Յամէն հանքչելու տեղիկ

Երեսին դընէր ու կու լար.

Հուզական մեծ լիցք պարունակող չորրորդ տողը ժողովրդական մտածողությանը (անեծքը) բնորոշ դիպուկությամբ ապրումների և սիրող մարդկանց փոխհարաբերությունների պարզաբանում է.

Կուրնա՛ չարկամնուն աչերն,

Կու պահեն գիս քենէ օտար.

Ա/Կ, 73-80:

Երբեմն բանաստեղծական կառույցը կազմվում է այնպես, որ հենց առաջին տողում երևում է հերոսի հոգեկան ապրումը, երկրորդ, երրորդ տողերում

բացահայտվում է «կրակի հետ խաղացող» կնոջ հոգեբանությունը, իսկ չորրորդ տողը դառնում է առաջին տողում արձածված ապրումի հոգեբանական հանգուցալուծումը.

Կարմիր ու ճերմակ երես,

Ամ քանի՞ դուն զիս պիտի երես.

Քանի որ մեճլիս նստիս՝

Ուներովտ հետ ինձ գրուցես.

Կոճկերտ ալ արձակ այնես

Ու ճերմակ ծոցտ ցըցընես.

Կու վախեն թողուս, ելնես,

Ու ծոցէտ մահրում մնամ ես.

Ա/Ա, 111-118:

Առաջին տողի հարցադրումը՝ դեռ ինչքան ինձ պիտի այրես-տանջես, իր պատասխանն է ստանում չորրորդ տողում. թեկուզ և «չնվաճած» ծոցը կորցնելու վախը ընդգծում է կարոտի, ցանկության ուժգնությունը:

Հոգեկան ապրումի բացահայտումով է սկսվում նաև հետևյալ հայրենի առաջին տողը.

Կանգնիմ ես ի քո դիմաց,

Լամ, որ իմ հուրն ըզքեզ չերէ.

Ա/Կ, 507-508:

Բացատրությունը տրվում է երկրորդ տողում. սիրո տեր է դարձել:

Դիմացինին չվնասելու, չցավեցնելու ցանկությունն էլ հենց մեծ սիրո խոստովանությունն է: Սակայն այդ սերը ոչ թե ուրախություն, այլ տանջանք է բերել, այրում (այս առումով հուր բառն անփոխարինելի է կառույցում): Ու երրորդ տողի պահանջը՝ «Ջանա՛», իր հրամայական հնչերանգով, որ մի պահ անհարիր է թվում վերը նշված նրբին վերաբերմունքին, իր անսպասելիությամբ իսկ դառնում է պարզ և հասկանալի՝ գումարվելով չորրորդ տողում աղջկա առջև դրված պայմանին.

Ջանա՛, շուտով ճար արա,

Ձիս ի քո գիրկըն ժողովէ.

Թե չէ կը սպանեն ես զիս,

Գան՝ ուզեն զարիւնս ի քենէ.

Ա/Կ, 511-514:

Գեղարվեստական ներգործուն պատկերները, որոնցով սկսվում են հայրենները, երբեմն կառույցի ավարտին բնորոշ լարվածությունը վերցնում են իրենց վրա՝ հյուսվածքին հաղորդելով հոգեբանական ենթատեքստ.

Հանչաք հայրենի ասիր,

Որ եղաւ սրտիկս քարէ տուն.  
Հառաչս ի յերկինքն ելաւ,  
Ու յերկնիցն ի վայր կու գար ձիւն.  
Ո՞վ տեսեր ամառըն ձիւն,  
Որ կու գայ ի վերայ մարդուն.  
Իմ Տէ՛ր, ամ կըրակ ձգէ  
Ու այրէ՛ ատոր սէրըն դուն.

Ա/Գ, 69-76:

Յուրաքանչյուր տող բանաստեղծական առինքնող պատկեր է, կոթողային պատկեր, փոխաբերական ընկալումների համար բաց տարածություն, ուր բացատրություն-մեկնաբանությունները երևակայության գծած ծիրի համեմատությամբ դառնում են ավելորդ մանրամասներ՝ տարածության մեջ տարրալուծվող: Տեղի է ունենում հոգեկան ուժերի բևեռացում (քարէ տուն, դեպի երկինք հասնող հառաչ, ամռանը՝ ձյուն), որ ցրվում, «փշրվում է» հանկարծ: «Իմ Տէ՛ր» դիմելաձևը հյուսվածքին հաղորդում է անօգնականության ինչ-ինչ երանգներ:

Սերը հայրեններում ընկալվում է իբրև ամենազոր զգացում, որ իշխում է մարդու մտքի և սրտի վրա: Այն բույն է հյուսում մարդու սրտում («Երբ սերն ի յաշխարհ եկաւ, / Եկաւ իմ սիրտըս բնակեցաւ»), տուն շինում այնտեղ («Քո սերն իմ սըրտիս միջին, / Տուն շիներ և ի մեջ կու կենայ») և ստիպում մարդուն անվերջ հայրեն ասել ու խմել: Ոչ ոք չի կարող խույս տալ սիրո ամենահաղթ ճիրաններից:

Հավքը գետնին կուտ չի ուտում, որ չընկնի սիրո թակարդը: Սակայն թռչունի համար որոգայթը ծովի մեջ էր լարած:

Պարզ պատկերների միջոցով հայրենի քնարական հերոսը հասնում է գաղափարների փիլիսոփայական խտացման:

Սեր-կրակ զուգորդումներում ընդգծվում է սիրո ուժը: Հայրենի հերոսը ցանկանում է հեռու գնալ, որ մոռանա սիրած էակին, սակայն ինչքան հեռու է գնում, այնքան կրակը նորանում է, ավելին՝ այնքան է լցվում կրակով, որ առաջարկում է.

Ում որ կրակ պիտենայ,  
Գայ տանի սրտես վառելու.

Ա/ԽԵ, 199-200:

Համեմատություններն ու զուգահեռները նպաստում են գեղարվեստական պատկերների թանձրացմանը.

Քո սերն է կրակ նման,  
Կրակն երկաթ կու հալէ.  
Իմ սիրտն է պատառ մի միս,

Կրակիտ ինչպե՛ս դիմանայ.

Ա/ԽԵ, 37-40:

Սիրտը կաթսա է, որի մեջ ցավն է եփվում, մարմինը՝ չոր փայտ, որ կրակը վառ է պահում: Երբ միսը եփվում է, հանգցնում են կրակը. իրենը միայն ոսկորն է մնացել, իսկ յարը կրկին նոր փայտ է ավելացնում:

Արյան փոխարեն իր երակները մտած սիրո գերիշխանությունն իր անձի, հոգու, մտքերի վրա հայրենի հերոսը խոստովանում է գեղարվեստական այնպիսի պատկերների միջոցով, որոնք հյուսվում են ընթերցողին ծանոթ առարկաների, երևույթների օգնությամբ և հենց դրանով իսկ ձեռք բերում ներազդելու հզոր ուժ.

Ո՞ւր էիր, ուստի՞ց եկիր,

Անծանօթ, ըզզիս սիրեցիր.

Կրակն ի թեզնիքդ ունեիր,

Ի ծոցիդ ի վայր թափեցիր.

Քո սերտ ալ ոսկի արիր,

՚Ի իմ սըրտիս քուրան հալեցիր.

Դարձար զան հալղայ արիր,

՚ Ի իմ սրտիս ականջն անցուցիր.

Ա/ԼԷ, 1-8:

Ծնվում են դրամատիզմով հագեցած գերխիտ պատկերներ, որոնք «խել» սիրուց անօգնական, անապավեն մնացած, հոգու դադար չունեցող մարդու անհատականացված ապրումների, մտքերի, զգացմունքների տեսանելի արդյունքն են:

Քո սերտ իմ սըրտիս միջին

Չանց մըտեր զէտ ոսկի բւեռ.

Գնացեր է սրտիկս ի ներս,

Ու փառչին եղեր կեռ ու մեռ.

Քո տեստ իմ սրտիս միջին

Չերկ արեր ու դարձեր է եռ.

Ա/Բ, 99-104:

Սրտի մեջ մտած բւեռի պատկերն արդեն իսկ ազդեցիկ է, բայց երկրորդ տողը բերում է զգացմունքի գերթանձրացում, որից «կտրվում է» ընթերցողի շունչը, որովհետև զգում է սրտի մեջ խորացող գամի ամրանալը:

Վերջին տողը աղջկա արտաքինի միջնորդավորված նկարագրություն է՝ տղայի վրա թողած ազդեցության միջոցով: Չենց այս տողն էլ ընթերցողի ուշադրությունը սևեռում է բւեռ բառի մակդիրի վրա: Ոսկի բառը նոր լիցքեր է հաղորդում ապրված

զգացմունքներին՝ սիրո պատճառած տառապանքներին խառնելով երանության, երջանկության տարրեր:

Մեկ այլ հայրենում սիրո կապանքներով գերված լինելու փաստը ներկայացվում է ճրագի, պատրույգի հետ տարվող զուգորդումներով: Այստեղ համեմատության համար եզր է հանդիսանում ոչ միայն առարկան ինքը, այլև նրա գործնական, կիրառական հատկությունը.

Ճրագ, քեզ երնեկ կու տամ,

Պահ մ'երիս, պահիկ մ'անցնիս.

Արե'կ, զգերիս նայե,

Որ անցաւ պատրոյգն ի լերդիս.

Ա/ԾԱ, 147-150:

Ճրագը, երբ ուզում է, վառվում է, երբ ուզում է՝ մարում, իսկ գերվածը չի կարող ազատվել «պատրույգից», որովհետև այն անցել է լարդի միջով և քաշել հանելու դեպքում սիրտն ավելի է ցավելու:

Երևույթի և հոգեվիճակների միջև անցկացվող զուգահեռների այս դիպուկությունը անակնկալի է բերում ընթերցողին. համեմատության եզրերը որքան էլ ծանոթ, այնուամենայնիվ անսպասելի են, ինքնատիպ ու յուրօրինակ:

Հոգեկան ալեկոծումներից ծնվում են հայրեններ, որոնք, Հ, Թամրազյանի բնորոշմամբ, գերզգայուն հոգու տեսիլներ են՝ նախանձելի անգամ 19-20-րդ դարերի մեծ սիմվոլիստների համար<sup>2</sup>.

- Քան զպահրի հաւուկ ես դու,

Ծովէտ ի դուրս է՞ր չես ի գար.

Յէ՞ր չես խղճար քո գերուդ,

Ի ծովուտ ափն եմ՝ քեզ համար.

- Գնա՛, ոսկի նաւ շինէ

Ու եղիր նաւիս նաւավար.

Զօթևանս ի ծոցդ արա,

Զիս արեան ծովէն հան ու տար.

Ա/Ե, 13-20:

Ընդգծելով բանաստեղծական համեմատության գեղեցկությունը՝ Հ. Թամրազյանը մեկնաբանում է. «Սիրած կինը նման է ծովային պահրա թռչունին: Այդ հավքը՝ այդ կինը, դուրս չի գալիս հանդիպելու ծովափին դեգերող և սեր աղերսող տղային՝ իր գերուն: Տղան խնդրում է պահրա թռչունին ծովի մեջ նավ շինել՝ իրեն

<sup>2</sup> «Նահապետ Քուչակի բանաստեղծական աշխարհը», Աշխատասիրությամբ ակադեմիկոս Հրանտ Թամրազյանի, Երևան, 2001, էջ 51:

ծոցն առնելու: Տղան կուզի, որ մնա այնտեղ՝ ծովի մեջ, սիրո նավի վրա, սիրածի գրկում, քանի որ նա առանց սիրո, առանց սիրած կնոջ ծովափին կմնա արյունարցունքի ծովի մեջ»<sup>3</sup>:

Մեկ անգամ չէ, որ հայրեններում ծովը հանդես է եկել իբրև սիրահարներին բաժանող եզր (օրինակ՝ Ա/Զ, 9-16): Կարծում ենք, որ վերոհիշյալ հայրենը՝ իբրև տեսիլ ու կառույց, կրում է հնագույն պատկերացումների հետքը, ըստ որի՝ ջրերում ապրում էին խաբուսիկ գեղեցկությամբ սիրենները, որոնք իրենց անուշիկ ձայնով գրավում էին նավավարներին: Ղ. Ալիշանը վկայում է. «Նհանգը, որին պատկերում էին եղեգներով պսակված և մի սափորի վրա ճկված, ըստ ժողովրդի խոսքի, նշանակում էր հույների Նայադ կոչված ջրային հավերժահարս»<sup>4</sup>:

Ծովի հավքի կողմից գերված լինելու պատկերն աղերսվում է այս հավատալիքներին: Ինչ վերաբերում է հայրենին, կարծում ենք, որ ոչ թե տղան է խնդրում պահրա թռչունին ծովի մեջ նավ շինել, այլ թռչուն-աղջիկը, այլապես համոզիչ չէ ծովափ-ծով, արյան ծով համեմատությունը, իսկ «ոսկի նաւ» արտահայտությունը կապված է հին ըմբռնումների հետ, երբ տղան վճարել է՝ աղջկան կնության առնելու համար:

«Արեան ծով» կապակցությունը բերում է ողբերգականի նոր երանգներ, ուժեղացնում է հուզական ներգործությունը՝ հուշելով, որ աղջիկն իր կամքով չի մնացել «ծովում»: Խոսքն այն մասին է, որ աղջկան չեն ամուսնացրել սիրած տղայի հետ:

Մեր տեսակետի հավաստիությունն է վկայում հետևյալ հայրենը, ուր խոսվում է տղայի՝ նավով աղջկա մոտ գնալու մասին.

Քո սէրն է անգին դումաշ,

Ի վաճառ վասն քեզ եկա.

Տվի զարևուս թարկիկն,

Ի վերայ ծովուս նաւեցայ.

Է՛, եար, ինձ բարիս առնուս,

Նաւս ունի զիս՝ առ քեզ կու գայ.

Իմ մէկն հազար եղաւ

Այն պահուն, որ գքեզ տեսա.

Ա/ԻԹ, 1-8:

<sup>3</sup> Նույն տեղում:

<sup>4</sup> Ղևոնդ Ալիշան, Հայոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնը, Երևան, 2002, էջ 39:



Հայրենը կարող ենք ընկալել թե՛ ուղիղ իմաստով՝ քնարական հերոսը նավով հեռավոր երկրից գնում է աղջկա մոտ, թե՛ փոխաբերական՝ հիմք ունենալով սեր-անգին դումաշ (մետաքսյա կտոր) գուգահեռը:

Մեկ այլ հայրեն, որի սկիզբը նույնպես անհուն, լայնատարած ծովում փակված պահրա թռչունի և հերոսի կարոտի մասին է, ստացել է այլ բովանդակություն, որ առաջին հայացքից թվում է խորթ, անհարիր պատկերին.

Եւ պէիրի հաւուկ ես դու,

Անհիուն ծովէն դու նատար.

Խիստ են կարօտեր ի քեզ,

Դու օրիկ մի դուրս ոչ ելար:

Ձինչ որ դու հետ ինձ արիր,

Չէ արեր օտարն հետ օտրին.

Շիշէ մի հալած ոսկիդ

Ի գետինն ի վայր թափեցին.

Խելօք ոսկերչին հարցա,

Թէ վաթած ոսկին կու ժողվի՞.

Յետի խելքն ամ ի՞նչ անեն,

Երբ առջի անունն աւիրի.

Ա/Գ 45-56:

Բայց եթե հայրենը դիտենք իբրև երկխոսություն, որի երկրորդ մասում աղջկա պատասխանն է, իմաստը կդառնա ընկալելի. աղջիկ գնելու վարձը, ըստ երևույթին, խելամտորեն չի տրվել կամ նպատակին չի ծառայել:

Հայրեններում առանձնահատուկ տեղ է տրված կնոջ արտաքին գեղեցկության՝ հասակի, ծոցիկի, դեմքի, շուրթերի, ատամների, մազերի, պարանոցի, հագուստի, պճնանքի նկարագրությանը: Անգամ այդպիսի հայրեններն օժտված են ավարտների անսպասելիությամբ, որով շեշտվում է նկարագրության բուն նպատակը.

Ձինչ եղէքն ի շամպին միջին

Կու ճօճայ, և ան քու անձն է.

Քո մէջտ է բարձր, երկան,

Եւ պոյիկդ է սալվի, թովան.

Ջուր անմահութիւն կասեն,

՚Ի այն ի քո ծոցդ կու բխէ.

Երնէկ ես այնոր կու տամ,

Որ դնէ դնչիկ ու խմէ.

Ա/ԾԲ, 37-44:

Հայրեններից մեկուն երգվում է, որ սիրուհու աչքերը վառ ճրագներ են, ունքերին գոհարներ են շարված, նա մարգարիտ ու սուտակ է կարել շուրթերին ու հենց դրանով էլ առել է իր շունչն ու հոգին:

Հայրեններում կնոջ գեղեցկությունը բացահայտվում է ոչ թե ինքնին, այլ տարվում է համեմատություն ծառի, ծաղկի, երկնային լուսատուների, թռչունների, անգին քարերի հետ: Դա հիմնականում կապված է մեր հին ըմբռնումների հետ, մյուս կողմից էլ բնության անառարկելի գեղեցկության հետ գեղուհու արտաքինի գուգորդումը պիտի խոսեր վերջինիս օգտին:

Կան համեմատություններ, որոնք այսօր էլ գերում են իրենց նրբությամբ, անհատականությամբ.

Քանի դու որ ինձ էիր

Նայ գարնան շաղիկն ի վրատ.

Երբ դու, որ յիսնէ դարձար՝

Ձիւն երեկ, եղեմն ի վրատ.

Ա/ԻԱ, 21-24:

\* \* \*

Ծագէ լոյս ի քո ծոցէդ,

Ձինչ գարնան կայծակն ի ամբէն.

Ա/ԽԱ, 179-180:

\* \* \*

Հանցեղ եմ ի քո սիրուտ,

Ձինչ ամառ՝ ծաղիկն ի ջրէ.

Եղջն ի յերկինքն ի վեր

Պաղատէր, թէ՛ Կաթ մի կաթէ.

Ա/ԻԹ, 28-31:

Մի հայրենում յարի աչքերը համեմատվում են աշնան չոր տերևների հետ, մյուսում յարը մանուշակ է, որ բուսել է թփերի մեջ, գլուխը կախել է, ու երեսն ամոթից քրտնել է (Ա/Ձ, 29-32):

Ժողովրդական մտածողությունն իր պարզությամբ ու անմիջականությամբ նովելայնության տարրեր է պարունակում.

Ձեր տունն ի բանէ եկի,

Ձքեզ տեսայ՝ բանըս մոռացայ.

Ա/ԻԷ, 21-22:

\* \* \*

Հիմայ չի սիրե՞նք զիրար.

Ջրուցէ՛, խռով մի՛ կենար.

Ա/ԻԷ, 43-44:

Առանձնապես գեղեցիկ են այն հայրենները, որոնք կառուցվում են ոչ թե բացահայտ, այլ սքողված համեմատությունների՝ փոխաբերության, շրջասության հենքի վրա.

Լուսին, պարծենաս, ասես.

«Լույս կու կամ ես աստղնւորիս».

Ահա հողեղեն լուսին

Ի գրկիս 'լ երեսն երեսիս.

Թե չես անտալ այս գերուս,

Յետ տանեն ըզփէշ կապայիս.

Վախեն սիրոյ տէր լինիս,

Լուս պակաս տաս աստղնւորիս.

Ա/ԽԴ, 301-308:

Առաջին մակարդակում լուսին-հողեղեն լուսին՝ գեղուհի կապը հնարավորություն է տալիս ընթերցողին շոշափելիորեն կենդանի տեսնել, ընկալել աղջկա գեղեցկությունը: Բայց կա նաև իմաստային կապը, այն ընդհանուր հատկանիշը, որի հիման վրա ստեղծվել է այդ փոխաբերությունը: Հագուստի փեշի տակ թաքնված լույս-սպիտակությունը կարող է գերել անգամ լուսնին ու նրան սիրո տեր դարձնել: Վերջին տողը նաև սքողված զուգահեռ է հերոսի հոգեկան ներաշխարհի հետ:

Եթե վերոհիշյալ հայրենում լուսինն ընկալելի է ուղիղ իմաստով, ապա մի ուրիշ դեպքում պատկերի ստեղծման համար հիմք է դառնում առարկայի հատկանիշը.

Լուսինն ի ծոցէտ ի դուրս

Աղբըրին ի յակն է ցաթեր.

Ա/Բ, 111-112:

Կան հայրեններ էլ, որոնցում կնոջ գեղեցկությունը տեսանելի է դառնում քնարական հերոսի հոգեկան աշխարհի, հուզաշխարհի բացահայտումով: Կապույտ շապիկ է հագել կինը, կոճակն էլ արձակել: Պատանին խնդրում է Աստծուն կտրել լեղակի հունդը, որ գեղուհին այլևս կապույտ չհագնի ու իր սրտիկն էլ չարյունի (Ա/Զ, 35-42): Հայրենի քնարական հերոսը պատրաստ է հոգին էլ տալու, եթե յարը ուզի, բայց աչքերը չի տա, որովհետև էլ ինչո՞վ պիտի նայի նրան (Ա/Ե, 61-64):

Բնությունը հայրեններում միայն համեմատության եզր չէ: Նա ինքը օժանդակում է սիրահարներին.

Էրնէկ ես անոր կու տամ,

Որ առեր իւր եարն է փախեր.  
Ոնց որ զկամուրջն անցեր,  
Ջուրն էլեր զկամուրջն է տարեր.  
Ձնիկ, եղենիկ եկեր,  
Ջոտվնուն հետքն է կորուսեր.  
Առեր ի պաղչան մտեր,  
Ձորեկով զդրնչիկն է պագեր.  
Ա/ՁԲ, 45-52:

Ջուրը քանդում է այն կամուրջը, որով սիրահարներն են անցել, ձյունն ու եղյամն էլ գալիս, կորցնում են նրանց ոտքերի հետքերը:

Չայրենները ժամանակի հոլովույթում չեն կորցրել իրենց հմայքը, և դա պայմանավորված է գեղարվեստական պատկեր ստեղծելու վարպետությամբ, որով հորինված են այդ ստեղծագործությունները՝ այնքան հարազատ ազգային խառնվածքին:

## Ամփոփում

Չայրենները ամփոփ, ավարտուն ստեղծագործություններ են, որ անօրինակ սեղմությամբ, տողերի ներքին շաղկապվածությամբ բացառում են մանրամասները՝ ընթերցողի երևակայության համար ստեղծելով բաց տարածություն: Բանաստեղծական այդ կառույցներում յուրաքանչյուր տող, համեմատություն, փոխաբերություն կամ մակդիր գեղարվեստական մի պատկեր է, ունի իր հստակ դերը, իսկ սյուժետային անակնկալ հանգուցալուծումը՝ հուզական հզոր լիցքերով, հայրենների գեղեցկությունն առ այսօր պայմանավորող հորինվածքային յուրահատկություն է:

Heriknaz Vorskanyan

## The Denouements of the Plot in Hayrens

### Summary

Hayrens are brief, completed works, with unexampled tightness and with the linkage of internal lines they exclude details creating opened space for the reader's imagination.

In that poetic structures every line, simily, metaphor or epithet is an artistic image that has its clear role and unexpected denouements of the plot, full of strong emotional fillings, is an inventive peculiarity conditioned by the beauty of hayrens till today.

ВОРСКАНЯН ЭРИКНАЗ

## СЮЖЕТНОЕ РАЗРЕШЕНИЕ В АЙРЕНАХ

### РЕЗЮМЕ

Айрены – краткие, завершенные произведения, которые с беспримерной сжатостью, с внутренней связностью строк исключают частичное, создавая открытое пространство для читательского воображения.

Каждая из строк, сравнение, метафора или эпитет в этих поэтических конструкциях представляет собой определенный художественный образ, со своей определенной ролью, а неожиданное сюжетное разрешение со своим мощным наполнением на сегодняшний день представляет собой вымышленную особенность красоты айренов.